Արձանագրություն թիվ 2

2021 թվականի փետրվարի 16-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ <<Ա>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները,ուսուցիչները,դասղեկ Անուշ Քոչարյանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զ. Գևորգյանը:

Օրակարգում՝

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:
2. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:
3. Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին- 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփման հարցը:
Ելույթ ունեցավ դասղեկ Անուշ Քոչարյանը՝ մեկ առ մեկ ներկայացնելով առարկաները և գնահատականները: Նա նշեց, որ 1-ին կիսամյակում դասարանում կա 6 ուսման առաջավորներ՝

1. Հակոբյան Միլենա
2. Մաթևոսյան Միլենա
3. Մուրադյան Նարե:

Որակական ցուցանիշը՝ 17,6%,առաջադիմություն՝94%:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, օգնել հետ մնացող աշակերտներին,բացառել հեռախոսների կիրառումը դասերի ընթացքում:

2.Լսեցին.- 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:

Ելույթ ունեցավ դասղեկ՝ Անուշ Քոչարյանը, ով ներկայացրեց 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում 9-րդ <<Ա >> դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր՝ 2- րդ կիսամյակի անելիքներն ու խնդիրները: Անուշ Քոչարյանը առաջարկեց 2-րդ կիսամյակում մեծ ուշադրություն դարձնել կարգապահությանն ու առաջադիմությանը՝ շտկելով նախորդ կիսամյակի սխալները և բացթողումները:
Դասղեկ Անուշ Քոչարյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների առաջադիմության հիմնախնդիրների հարցում:.Դասղեկը հորդորեց ծնողներին սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ, ինչը կնպաստի սովորողների

ուսուցումն ու դաստիարակությունը ճիշտ ու արդյունավետ կազմակերպելուն: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքները, լավ պահել, պահպանել դասագրքերը, մասնավորապես չկորցնել դրանք:

Որոշեցին.- Ծնողները խոստացան հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հաճախակի այցելել դպրոց, կապ հաստատել ուսուցիչների, դասղեկի, տնօրենի հետ:

3.Լսեցին.-Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Անուշ Քոչարյանը նշեց ,որ 2-րդ կիսամյակում ևս դպրոցը աշխատելու է վեցօրյա ռեժիմով /9-00--13-55/: Նա հորդորեց ծնողներին հետևել, որ իրենց երեխաները հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավելագույնս ուշադիր լինել նրանց հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Արմենուհի Հովհաննիսյան

Քարտուղար՝ / Երանուհի Սարգսյան